ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ
Ֆիզիկամաթեմատիկական գիտ. թեկնածու, ԳՀՃ

ԱԶԳԱՅԻՆ ՀՆԱԳՈՅՆ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Պատմութիւնից գիտենք, որ օրացոյցը միշտ եղել է Հայաստանեայց Եկեղեցու ուշադրութեան կենտրոնում: Յիշենք, օրինակ, որ մաշտոցեան դպրութեան հէնց առաջին տասնամեակներում (420–430-ական թթ.) հայերէն է թարգմանուել Անդրէաս Բիւզանդացու Տոմարը[1]: Նոյնը տեսնում ենք նաեւ հայերէն գրատպութեան սկզբում. Յակոբ Մեղապարտի հրատարակած առաջին գրքերից մէկը 1512 թ. Վենետիկում լոյս տեսած «Պարզատումարն» է[2]:

Օրացոյցը (տոմարը) եւ դրան վերաբերող հրապարակումները կարեւոր տեղ են ունեցել նաեւ Մայր Աթոռի հրատարակութիւնների մէջ սկզբից եւեթ: Պատահական չէ, որ Հայաստանում Սիմէոն Երեւանցի հայրապետի հիմնած առաջին տպարանի հէնց առաջին գրքերից է 1774-ին լոյս տեսած նշանաւոր Սիմէոնեան Տօնացոյցը: Հայկական օրացոյցին նուիրուած տարաբնոյթ երկերի լոյս ընծայումով Մայր Աթոռի հրատարակչութիւնը իր առաջատար դերը չի կորցրել նաեւ մեր օրերում: (Յօդուածիս Յաւելուածում իբրեւ օրինակ տրուած են Մայր Աթոռում տողերիս հեղինակի հրապարակած տոմարական երկերի քանակն ու հիմնական արդիւնքների մի մասը):

---

[1] Էդ. Ազատեան, *Անդրէաս Բիւզանդացու երկուհարիւրամեայ տօնացոյցը եւ նրա հայերէն թարգմանութիւնը, Բանբեր Երեւանի Համալսարանի, թիւ 2, 1972, էջ 122–139:*

[2] Գր. Բրուտեան, *«Պարզատոմարի» տպագրութեան թուականի մասին, «Էջմիածին». Ա, 1997, էջ 90–95: Ըստ Ռ. Իշխանեանի, «Պարզատումարը» Յակոբի տպած գրքերից չորրորդն է, կամ նոյնիսկ՝ հինգերորդը կամ վեցերորդը (եթէ ընդունենք, որ առաջին տպագիր գրքի՝ «Ուրբաթագիրքի» եւ մեզ հասած երկրորդի՝ «Պատարագատետրի» միջեւ եղել է մեզ չհասած մի այլ տպագիր գիրք եւս, իսկ «Ուրբաթագիրքից» առաջ տպուել է նաեւ դարձեալ մեզ չհասած մի «Սաղմոս»): Այս մասին տե՛ս* Ռ. Իշխանեան, *Նորը հայ հնագոյն տպագրութիւնների վերաբերեալ, «Բանբեր Մատենադարանի», հ. 7, էջ 275–295, 1964,* Նոյնի՝ *Հայ հնագոյն տպագրութիւնների ժամանակագրութեան հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», հ. 8, էջ 183–189, 1967, նաեւ՝* Նոյնի *Հայ գրքի պատմութիւն, հ. 1, էջ 158–160 եւն, «Հայաստան» հրատ., Երեւան, 1977:*

Օրինաչափ հարց է առաջանում. թէ ո՞րտեղից է գալիս այս բացառիկ հետաքրքրութիւնը օրացոյցի (յատկապէս՝ ազգային օրացոյցի) նկատմամբ։

Մայր Աթոռի հրատարակութիւնները սկզբից եւեթ, որպէս կանոն, միշտ աչքի են ընկել յստակ շեշտուած ազգային, հայրենասիրական, հայրենաճանաչողական ուղղուածութեամբ։ Եւ շատերի համար կարող է տարակուսելի երեւալ այսպիսի ուղղուածութեամբ տարաբնոյթ հրատարակութիւնների ցուցակում տոմարական հրատարակութիւնների պատկառելի քանակը։

Հասկանալու համար, թէ ինչ կապ կարող է լինել Մայր Աթոռի հրատարակութիւնների հիմնական ուղղուածութեան եւ օրացոյցի միջեւ նախ եւ առաջ յստակեցնենք, թէ ինչ է հայրենաճանաչութիւնը, եւ ինչ կարող է դա տալ մարդուն։

Անշուշտ, հասկանալի է, որ հայրենաճանաչութիւնը մարդու աշխարհճանաչողութեան մի բաղադրիչ մասն է։ Ընդ որում, հէնց այ՛ն մասն է, որով սկիզբ է առնում ընդհանուր աշխարհճանաչողութիւնը։ Եւ սրա պատճառն էլ հասկանալի ու բնական է, զի նոր աշխարհ եկած մարդը սկսում է աշխարհը ճանաչել իր անմիջական շրջապատը ճանաչելուց։ Իսկ իր անմիջական շրջապատը (բնականոն հանգամանքներում) իր հայրենիքի մի մասն է (իրեն ամենամօտ մասը)։

Իսկ ինչ է տալիս մարդուն հայրենաճանաչութիւնը։

Անշուշտ, այս հարցի պատասխանը շատ ընդգրկուն է, եւ այս հարցը հնարաւոր է քննարկել տարբեր տեսանկիւններից։ Սակայն մեր խնդրի համար էականը հարցիս այ՛ն կողմն է, որով դա աղերսւում է օրացոյցին եւ դրա պատմութեանը։ Ըստ այսմ՝ դիտարկենք հայրենաճանաչութիւնը որպէս անձի ինքնաճանաչման, ինքնահաստատման միջոց։

Ինչից է սկսւում մարդու ինքնաճանաչումը։

Յիշենք, թէ ինչ են սովորեցրել մեր մեծերը մեզ մեր մանկութեան ամենավաղ շրջանում (նոյնն է՝ թէ ինչ ենք մենք սովորեցնում մեր զաւակներին ամենասկզբից)։

Առաջինը, որ երեխան ճանաչում է, իր ծնողներն են, իր մարմնի մասերը (բերան, աչք, քիթ, ականջ, ձեռք եւն)։ Այսինքն, ինքնաճանաչումը սկսւում է սեփական անձի (եւ ամենամօտիկ անձերի) ճանաչումից։

Շրջապատող աշխարհի (բնականաբար՝ ամենամօտիկ) առարկաների նախնական ճանաչմանը յաջորդում է ընտանիքի եւ դրա

պատմութեան ճանաչումը, ապա սեփական բնակավայրի անցեալի իմացութիւնը, յետոյ՝ սեփական երկրի եւ ազգի պատմութիւնը, կրօնի իմացութիւնն ու դրա պատմութիւնը եւ այլն։ Այսինքն, կարող ենք մօտաւոր կերպով մարդու ինքնաճանաչման փուլերը դասաւորել հետեւեալ պայմանական հերթականութեամբ։

ա. սեփական անձի ճանաչում,

բ. ծնողների ճանաչումը,

գ. սեփական ընտանիքի պատմութիւնը,

դ. սեփական բնակավայրի ճանաչումը,

ե. այդ նոյն բնակավայրի անցեալի իմացութիւնը,

զ. սեփական երկրի եւ ազգի պատմութիւնը,

է. սեփական կրօնի եւ դրա պատմութեան իմացութիւնը։

Ահա այս ամենը ի մտի ունենալով այժմ նայենք, թէ ինչ է օրացոյցը։

Մի կողմից լինելով ժամանակաչափութեան ուրոյն գործիք (կոչուած՝ ժամանակի տեւական հատուածները չափելու), միւս կողմից էլ՝ զուտ իբրեւ մշակութային իրողութիւն օրացոյցը պարտադիր բաղադրիչ մասն է կրօնի իբրեւ կրօնական տարբեր գործողութիւնների տեղը ժամանակի մէջ ցոյց տուող համակարգ[3]։ Սրա հետ մէկտեղ՝ օրացոյցը նաեւ մաթեմատիկական կառոյց է եւ, ըստ այսմ, շատ աւելի լաւ է ենթակայ վերլուծման, քան մշակութային այլ իրողութիւնները։ Եւ սա էլ նշանակում է, որ հնարաւոր է օրացոյցի վերլուծութեան միջոցով նրանից դուրս կորզել նրա պարունակած տեղեկոյթը մշակութային տարբեր իրողութիւնների մասին։ Եւ այս առումով օրացոյցը էական առաւելութիւն ունի մշակութային այլ իրողութիւնների (օրինակ՝ գրականութեան, կերպարուեստի, մինչեւ իսկ՝ լեզուի) նկատմամբ։

Ինչպէս վերը արդէն նշուեց, օրացոյցը նաեւ (նախ եւ առաջ) կրօնական իրողութիւն է, մասն է կրօնի։ Իսկ կրօնն էլ, ինչպէս գիտենք, իր նախնական ձեւերով ի յայտ է գալիս մարդկային քաղաքակրթութեան հէնց արշալոյսին։ Այսինքն, կրօնը մարդու ուղեկիցն է եղել քաղաքակրթութեան եւ մշակոյթի տարբեր դրսեւորումների սկզբնաւորումից եւեթ։ Ստացւում է, որ իբրեւ կրօնի մաս, օրացոյցը եւս պիտի եղած լինի բանական մարդու անբաժան ուղեկիցը մարդկային քաղաքակրթութեան ամբողջ ընթացքում։ Սա էլ, իր հերթին, նշանակում է, որ օրացոյցի

[3] Գր. Բրուտեան, *Հայկական տոմարագիտութիւն, էջ 11—30, «Մխիթարեան հրատարակչութիւն», Երեւան, 2016։*

վերլուծութիւնը մեզ կարող է տեղեկութիւններ տալ մարդկային պատմութեան ամենավաղ անցեալի մութ եւ անյայտ էջերի մասին։ Այսինքն, ստացւում է, որ օրացոյցը կարող է ծառայել իբրեւ մի ուրոյն զննաձող, որ իր վրայ կրում է մարդկային հեռաւոր անցեալի պատմութեան եւ մշակութային վայրիվերումների հետքերը, եւ որի վերլուծութիւնը մեզ կարող է տեղեկոյթ տալ այն ժամանակների պատմական եւ մշակութային իրողութիւնների մասին, որոնց վերաբերեալ այլ աղբիւրներից մեզ տեղեկութիւններ չեն հասել։

Սրա հետ մէկտեղ՝ օրացոյցը, իբրեւ ժամանակաչափութեան գործիք, էապէս կախուած է իր ժամանակի գիտութեան մակարդակից։ Ուստի, օրացոյցի վերլուծութիւնը կարող է տեղեկոյթ տալ նաեւ հեռաւոր անցեալի գիտութեան մակարդակի մասին։ Սա յատկապէս վերաբերում է աստղագիտութեանը եւ մաթեմատիկային։

Այսպիսով, ստանում ենք, որ, օրացոյցը կարող է հանդէս գալ իբրեւ հնագոյն ժամանակների մշակութային, կրօնական, պատմական ու գիտական իրողութիւնները իմանալու, ճանաչելու եզակի գործիք։

Որպէսզի այս ամբողջ ասուածը չհնչի իբրեւ մերկապարանոց յայտարարութիւն, ստորեւ դիտարկենք մի քանի առաւել ցայտուն օրինակներ։

Օրինակ ա.

Զ դարի կէսերին Հայոց եւ արեւմտեան եկեղեցիների (ի մասնաւորի՝ Աղեքսանդրիայի Եկեղեցու) յարաբերութիւնների, չյայտարարուած առճակատումների մասին մենք իմանում ենք՝ վերլուծելով Հայոց, Վրաց եւ Աղուանից ինչպէս եւ տարածաշրջանի որոշ այլ օրացոյցները, դրանց կառուցուածքը եւ դրանց հետ աղերսուող պատմական որոշ իրադարձութիւններ։ Եւ այս վերլուծութիւնների համար իբրեւ ելակէտ են ծառայում Անանիա Շիրակունու տոմարական երկերը եւ յարակից որոշ տեղեկոյթ՝ տոմարի բնագաւառից։ Այսպէս. իմանում ենք, որ 561 թ. Աղեքսանդրիայում գումարուել է 36 տոմարագէտների ժողով՝ էաս Աղեքսանդրացու գլխաւորութեամբ, որտեղ կարգադրուել է նոր միասնական համաքրիստոնէական օրացոյց-տօնացոյցի հարցը։ Հայոց Եկեղեցին այդ ժողովին չի մասնակցել, զի 9 տարի առաջ՝ 552-ին ինքնուրոյնաբար կարգադրել էր իր օրացոյցի եւ զատկացուցակի խնդիրները Մովսէս Բ. Եղիվարդեցի կաթողիկոսի կարգադրութեամբ եւ Աթանաս Տարօնացու ձեռամբ։ Ահա, պարզւում է, որ Աղեքսանդրիայի ժողովը (Հայաստանից լիազօր ներկայացուցչի բացակայութեամբ) անդրադարձել է նաեւ

հայկական օրացոյցի հարցին, խոտան է սեպել Աթանաս Տարօնացու ստեղծած հայկական ինքնուրոյն տոմարը եւ նոր օրացոյց-տօնացոյց է կազմել Հայոց համար։ Բնականաբար, Հայոց Եկեղեցին էլ չի ընդունել Աղեքսանդրիայի ժողովի կողմից իր համար կազմուած օրացոյցը եւ շարունակել է կիրառել իր սահմանած տոմարը։ Սակայն հարցը այսքանով չի սահմանափակուել։ Ինչպէս յայտնի է, այդ ժամանակ Հայաստանեայց Եկեղեցու նուիրապետական համակարգի մէջ էին մտնում նաեւ Վրաց եւ Աղուանից եկեղեցիները։ Պարզւում է, որ Աղեքսանդրիայի ժողովը առանձին օրացոյցներ է կազմել նաեւ Վրաց եւ Աղուանից համար[4]։ Սա արդէն նշանակում է միջամտութիւն Հայաստանեայց Եկեղեցու ներքին գործերին[5]։ Այսինքն, այս պարագայում ունենք յստակ վկայութիւն առ այն, որ 561 թ. եղել է չյայտարարուած լուռ հակամարտութիւն Հայաստանեայց Եկեղեցու եւ արեւմտեան (եւ որոշ արեւելեան) եկեղեցիների միջեւ։

Օրինակ բ.

Առաւել կարեւոր է տոմարական հետազօտութիւնների տուած տեղեկոյթի արժէքը անցեալի պատմութեան ա՛յն ժամանակների վերաբերեալ, որոնցից գրաւոր յիշատակութիւններ մեզ չեն հասել։ Այս առումով շատ կարեւոր արդիւնք է ստացւում տոմարական հետազօտութիւնների միջոցով ն. Ք. 24-րդ դարում Հայաստանում տեղի ունեցած իրադարձութիւնների մասին։ Այսպէս. Հայոց Հայկեան եւ Նախահայկեան օրացոյցների համեմատական քննութիւնը եւ դրա համադրումը աստղագիտական որոշ պարզ օրինաչափութիւնների հետ ցոյց է տալիս, որ ն. Ք. 2341 թ. տեղի ունեցած անցումը Նախահայկեան օրացոյցից Հայկեանին արդիւնք է եղել թուարկութեան 10-ական համակարգից 12-ական համակարգին անցնելու։

---

[4] *Նոյն տոմարական աղբիւրների քննութիւնից իմանում ենք, որ Աղուանից Եկեղեցին երբեւէ չի ընդունել եւ չի կիրառել Աղեքսանդրիայի ժողովի կազմած Աղուանական օրացոյցը, միշտ մնալով Հայաստանեայց Եկեղեցու նուիրապետական համակարգի մէջ, իսկ Վրաց Եկեղեցին էլ վերջնականապէս անցել է այդ օրացոյցի կիրառմանը դրա ստեղծումից միայն 220 տարի անց, երբ ամբողջապէս աւարտուել է Վրաց Եկեղեցու անջատումը Հայաստանեայց Եկեղեցուց։ Տե՛ս նաեւ յաջորդ ծանօթագրութիւնը։*

[5] *Հարցիս քննութեան մանրամասները տե՛ս* Գ. Բրուտեան, *Վրաց եւ Աղուանից օրացոյցները ըստ Անանիա Շիրակունու Տոմարի. դրանց կառուցուածքին ու ծագմանը վերաբերող որոշ խնդիրներ, «*Հայաստանը եւ քրիստոնեայ Կովկասը*» գիտաժողով նուիրուած Կովկասեան Աղուանքում եւ Վրաստանում քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակին, Զեկուցումներ եւ զեկուցումների դրոյթներ ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2015, էջ 58–68։*

Խնդրոյ առարկայ երկու օրացոյցներն էլ յեցած են եղել աստղագիտական միեւնոյն պատկերացումների վրայ։ Դրանց տարբերութեան «գաղափարական» մասը պայմանաւորուած է եղել միայն դրանցից իւրաքանչիւրի հիմքում եղած թուարկութեան համակարգով[6]։ Մինչեւ ն. Ք. 2341 թուականը կիրառուած Նախահայկեան օրացոյցի հիմքում եղել է թուարկութեան 10-ական համակարգը, մինչդեռ նշեալ թուականից կիրառութեան մէջ դրուած Հայկեան օրացոյցի հիմքում եղել է թուարկութեան 12-ական համակարգը։ Իսկ թուարկութեան տարբեր համակարգերը բացի մաթեմատիկական տարբերութիւններից նաեւ հիմնուած են աշխարհայեացքային-հաւատամքային տարբերութիւնների վրայ։ Դրանց տարբերութիւնների հիմքում թուերին վերագրուող ինչ-ինչ յատկութիւնների մասին պատկերացումներն են եւ այդ պատկերացումներից բխող՝ դիցաբանական տարբերութիւնները։ Այսինքն, ստացւում է, որ 10-ական համակարգի վրայ յեցած օրացոյցից անցումը 12-ական համակարգի վրայ յեցած մի այլ օրացոյցի պիտի նշանակի հաւատքային-կրօնական մի ինչ-որ համակարգից անցում մի այլ համակարգի[7]։ Իսկ սա էլ, իր հերթին, նշանակում է պարզապէս կրօնական փոփոխութիւն, անցում մի կրօնից մի այլ կրօնի։

Ստացուեց, որ միայն օրացոյցի հետազօտութեամբ մենք տեղեկոյթ ենք ստանում մեզնից 45 դար առաջ տեղի ունեցած կրօնական լուրջ փոփոխութեան մասին։

Այս անսպասելի արդիւնքը վերջերս ստացաւ նաեւ հնագիտական հիմնաւորում։ Արագածի բարձրադիր Տիրին Կատար (կամ Կարմիր սար) հնավայրում վիշապակոթողների պեղումները ի յայտ են բերել շատ ուշագրաւ մի իրողութիւն։ Պեղուած վիշապների մի ստուար մասը մեզ է հասել թաղուած վիճակում։ Ըստ պեղող հնագէտների վիշապները

---

[6] *Թուարկութեան (կամ հաշուարկման) համակարգը բնական (յատկապէս՝ մեծ) թուերը գրելու կանոնակարգուած ձեւ է, որում օգտագործւում են սահմանափակ քանակով թուանշաններ՝ տարբեր թուեր գրելու համար։ 10-ական համակարգում բոլոր թուերը գրւում են ընդամենը 10 թուանշանների միջոցով (0, 1, 2, ... 9), եւ թուանշանի արժէքը թուի ընդհանուր գրութեան մէջ կախուած է դրա զբաղեցրած դիրքից։ Աջից ձախ թուանշանի արժէքը որոշւում է դրա եւ 10-ի համապատասխան աստիճանի (0, 1, 2, 3, եւն) արտադրեալով։ Թուարկութեան 12-ական համակարգում թուերը գրւում են 12 թուանշանների միջոցով եւ թուի գրութեան մէջ դրանց արժէքը որոշւում է դրանց եւ 12-ի աստիճանների արտադրեալով։*

[7] *Այս մասին մանրամասն տե՛ս* G. Broutian, The Relation of 300-day and 360-day Years in the Oldest Armenian Calendars, Proceedings of the Armenian-Iranian Astronomical Workshop, 13–16 October 2015, Byurakan, Armenia, Editors: A.M. Mickaelian, H. Khosroshahi, H.A. Harutyunian, NAS RA "Gitutyun", Publishing House, Yerevan, 2016, *էջ 242–247.*

բերանքսիվայր պառկեցուած են եղել գետնին եւ խնամքով թաղուած (մանր ու մեծ քարերով «զմռսուած», ամփոփուած) եւ ապա հողով ծածկուած։ Եւ ահա, այդ վիշապային թաղումների վրայ բոլոր դէպքերում էլ յայտնաբերուած է Ն. Ք. 3-րդ հազարամեակի խեցեղէնի կտորտանք[8]։ Հասկանալի է, որ վիշապակոթողները որոշակիօրէն կրօնական յուշարձաններ պէտք է եղած լինեն (այսինքն՝ մեր այսօրուայ եզրերով՝ դրանք կուռքեր են եղել)։ Իսկ կրօնական պաշտամունքային առարկայի ծիսական թաղումը պիտի նշանակի այդ առարկայի «տէրը» հանդիսացող կրօնից անցում մի այլ կրօնի։ Այս կապակցութեամբ տեղին է յիշել Մովսէս Խորենացու պատմածը Հայոց Աբգար թագաւորի ժամանակ քրիստոնէութեան անցնելու մասին։ «Եւ զդուրս տաճարաց կռոցն փակեցին. եւ որ ի վերայ բագնին եւ սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ» (Մովսէս Խորենացի, Բ., ԼԳ.)։ Այսինքն, նոր կրօնի անցնելիս նախկին կրօնի կուռքերը չեն ոչնչացուել, այլ խնամքով ծածկուել են, մեկուսացուել։ Սա հէնց այն է, ինչ մենք տեսնում ենք վիշապակոթողների ծիսական թաղման պարագայում[9]։ Այսինքն, Տիրին Կատարում յայտնաբերուած վիշապների թաղման փաստը վկայում է, որ այդտեղ տեղի է ունեցել կրօնական մի ինչ-որ էական փոփոխութեան հետ կապուած՝ հին կրօնի կոթողների մեկուսացում, թաղում։ Եւ այս թաղման ժամանակն էլ պէտք է լինի Ն. Ք. 3-րդ հազարամեակ, քանի որ թաղումների վրայ հէնց ա՛յդ ժամանակուայ խեցեղէնի կտորտանք է յայտնաբերուած։ Ահա այս ժամանակն էլ լաւագոյնս ներդաշնակում է մեր ստացած թուականին՝ Ն. Ք. 2341 թ., որ հէնց Ն. Ք. 3-րդ հազարամեակի կէսերն է։

Օրինակ գ.

Իբրեւ մի վերջին օրինակ էլ նշենք, որ Հայոց հնագոյն օրացոյցների քննութիւնը մեզ բաւական համակողմանի տեղեկոյթ է տալիս մեզնից առնուազն 11 հզր. տարի առաջուայ աստղագիտական ու հաշուողական գիտելիքի բաւական բարձր մակարդակի մասին։ Իրօք, Ն. Ք. 9000 թ.

[8] Պեղավայրը 2019 թ. ամռանը ինձ մանրամասն ցոյց են տուել եւ մանրակրկիտ բացատրութիւններ տուել հնագէտներ Արսէն Բոբոխեանը եւ Ալեսսանդրա Հնելան, որի համար նրանց իմ երախտագիտութիւնն եմ յայտնում։

[9] Սրանից կարելի հետեւեցնել, որ Հայաստանում հնուց ի վեր աւանդոյթ է եղել հին կրօնին վերաբերող իրողութիւններին խնամքով վերաբերուելու, դրանք չոչնչացնելու, այլ ծածկելու, մեկուսացնելու (թաղելու)։ Ըստ այսմ հարկ է անհիմն համարել Մեծ Հայքում քրիստոնէութեան պետական ընդունմանը նաեւ նախաքրիստոնէական ամբողջ մշակոյթի հիմնայատակ ոչնչացում, բնաջնջում վերագրելը։

սկիզբ առնող Նախահայկեան օրացոյցի կիրառողները պէտք է կարողանային առնուազն մէկ օրուայ ճշտութեամբ որոշել որոշ պայծառ աստղերի արեգակնային ամբարձման եւ անկման օրերը: Նշենք, որ, ի նկատի առնելով խնդրոյ առարկայ դարաշրջանը, սա բաւական լուրջ գիտողական խնդիր պիտի լինէր՝ կապուած դիտումների համար համապատասխան վայրեր, կողմնորոշիչներ, ընտրելու, տարրական յարմարութիւններ (գուցէ նաեւ՝ որոշ պարզ յարմարանքներ) ստեղծելու, սպասուող իրադարձութեան օրը մօտաւոր կերպով հաշուարկելու եւ այդ ամենն իրականացնելու համար անհրաժեշտ հմտութիւններով ու գիտելիքով օժտուած դիտողներ եւ այլ մասնագէտներ պատրաստելու հետ: Այսինքն, այսպիսի օրացոյց կիրառող հասարակութիւնը անպայման պէտք է ունենար նաեւ գիտական ու կրթական բաւական բարձր մակարդակ:

Անշուշտ, կարելի է այլ օրինակներ եւս բերել: Սակայն աստ բերուածն էլ բաւարար է համոզուելու համար, որ, իրօք, ազգային հին եւ հնագոյն օրացոյցների իմացութիւնը եւ հետազօտութիւնը կարող են ծառայել իբրեւ եզակի աղբիւր հնագոյն ժամանակների՝ այլուստ անյայտ իրողութիւնների մասին թանկագին տեղեկոյթ ստանալու համար: Ի մասնաւորի՝ ազգային հնագոյն օրացոյցների իմացութեամբ հնարաւոր է տեղեկութիւն ստանալ

ա. *Ազգային պետականութեան հնագոյն ժամանակների դրութեան մասին,*

բ. *Ազգային կրօնի հնագոյն անցեալի մասին,*

գ. *Սեփական երկրում հնագոյն ժամանակների գիտութեան մասին:*

Այսինքն՝

ա. Ազգային պատմութեան մասին,

բ. Ազգային կրօնի մասին եւ

գ. Ազգային երկրում գիտութեան պատմութեան մասին:

Բնականաբար, այս ամենը բերում է ազգային պատմութեան, կրօնի (կրօնների), գիտութեան ամենավաղ ժամանակների դրութեան իմացութեան: Իսկ սա էլ, իր հերթին, ըստ էութեան հայրենաճանաչութիւն *է: Ընդ որում՝ հայրենաճանաչութիւն է յատկապէս հոգեւոր, գաղափարական առումով: Եւ յատուկ հիմնաւորման կարիք չունի այն, որ հայրենաճանաչութիւնն էլ սկիզբն ու հիմքն է հայրենասիրութեան:*

Այսպիսով, ստացւում է, որ իր հրատարակութիւններում մեծ տեղ տալով տոմարին, մասնաւորապէս՝ ազգային տոմարին վերաբերող

նիւթերին, Մայր Աթոռը շարունակել է կատարումն իր աւանդական հայրենապահպան առաքելութեան:

Յաւելուած

Տողերիս հեղինակի՝ Հայոց տոմարին վերաբերող հրապարակումները Մայր Աթոռում (1983–2019 թթ.)

- 25 յօդուած,
- 2 մենագրութիւն (1997, 1998 թթ.):

Նշուած հրապարակումների մէջ ճշգրտուել են Հայոց միջնադարեան օրացոյցների հետ կապուած բազմաթիւ հարցեր: Ի մասնաւորի, ճշգրտուել են.

- Հայոց Մեծ թուականի սկիզբը,
- Հայոց Մեծ թուականի հիմնադիր կաթողիկոսը,
- Անանիա Շիրակունու տոմարական բարեփոխումը,
- Յայտնաբերուել եւ հրատարակուել են Անանիայի Տոմարի որոշ մասեր,
- Յովհաննէս Սարկաւագի ստեղծած անշարժ օրացոյցի որոշ հարցեր,
- Հայոց Հայկեան օրացոյցի սկիզբը եւ դրա պատմական հիմնաւորումը,
- Հայոց Նախահայկեան օրացոյցի բնոյթը եւ այլն:

Եւ վերջում իբրեւ Հայոց օրացուցային հարուստ մշակոյթի ամփոփ ներկայացում աղիւսակով տանք Հայաստանում կիրառուած տարբեր օրացոյցներն ու դրանց ժամանակները.

Օրացոյցը	Կիրառութեան ժամանակը	Կիրառութեան տեւողութիւնը
Նախահայկեան օրացոյց	*Ն. Ք. 9000 թ.— Ն. Ք. 2341 թ.*	66,5 *դար*
Հայկեան օրացոյց	*Ն. Ք. 2341 թ.— Փրկչ. 552 թ.*	28 *դար*
Հայոց Մեծ թուական	*Փրկչ. 552 թ.— 20-րդ դար*	14 *դար*
Սարկաւագաղիր	*Փրկչ. 1112 թ.— 19-րդ դար*	7,5 *դար*
Հռոմէական օրացոյց	*Փրկչ. 1774 թ.— մինչ օրս*	2,5 *դար*

РЕЗЮМЕ

Предпринята попытка объяснить, с чем связаны исключительное внимание и интерес к армянскому календарю в Первопрестольном Святом Эчмиадзине, наблюдаемые на протяжении всей известной нам истории. Показано, что

изучение календарей может быть уникальным и ценным источником информации о древней истории, религии, науке и культуре в целом. В качестве примеров представлены необъявленное безмолвное противоречие в отношениях между армянским и другими церквами в середине VI века. Существенные религиозные перемены, произошедшие в Армении в середине 3-го тысячелетия до Р. Х., а также информация о высоком уровне науки и образования в Армении в 10-ом тысячелетии до Р. Х., о которых мы узнаем сегодня исключительно благодаря исследованиям древних армянских календарей.

SUMMARY

An attempt was made in the Mother See of Holy Etchmiadzin to explain the reasons for the exceptional attention and interest in the Armenian calendar observed throughout the history known to us. It is shown that the study of calendars can be a unique and valuable source of information about ancient history, religion, science and culture in general. Undeclared silent contradiction in relations between the Armenian and other churches in the middle of the 6th century, significant religious changes that took place in Armenia in the middle of the third millennium BC, as well as information on the high level of science and education in Armenia in the 10th millennium BC serve as examples, about which we learn today exclusively through the study of ancient Armenian calendars.